



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

BISHOP KHAJAG BARSAMIAN, PRIMATE

Թի 845
Ապրիլ 8, 1992

Մեծայարգ
Տիար Նուպար Տօրեան
Ս. Խաչ Եկեղեցւոյ
Ծխական Խորհուրդի Ատենապետ
Եունիըն Սիթի.

Յարգելի Տիար Տօրեան,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները: Կը տեղեկացուի թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 2, 1992-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդին վեց անդամներ:

Տեղեկանալով քուէարկութեանց արդիւնքին՝ այս գրութեամբ կը վստահացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրու- թիւնը.

Ալիս Եիկիթբուրդ
Նուպար Տօրեան
Ծան մալու
Ջաւէն Յովսէփեան
Անիթա Պէրպէրօլլու
Արօ Պօղոսեան:

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ համաձայն Կանոնադրութեան՝ Անդամական Ժողովի ընթացքին կատարուած որեւէ ընտրութիւն պէտք է ըլլայ երկպատիկ ցանկի մը վրայէն եւ գաղտնի քուէարկութեամբ, իսկ Ծխական Խորհուրդի հաշուական տեղեկագիրին ներքեւ Հաշուեքննիչ Յանձնախումբի ատենապետին ստորագրութիւնը կը պակսէր:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը: Մեր մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

Խաժակ Եպս. Պարսամեան
Առաջնորդ